Պատմության թեստ

Հրահանգ

Ձեր առջև քննական թեստի էլեկտրոնային բուկլետն է:

Ուշադիր ծանոթացեք թեստի յուրաքանչյուր առաջադրանքին, լավ ըմբռնեք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը, այնուհետև սկսեք աշխատանքը:

Թեստի առավելագույն միավորն է՝ 60:

Թեստի աշխատանքի համար տրամադրվում է 5 ժամ:

Մաղթում ենք հաջողություն

Հաջորդ էջին անցնելու կամ ետ վերադառնալու համար
կարող եք կիրառել ստեղնաշարի կոճակները:

Հրահանգ №1-24 առաջադրանքների համար: Յուրաքանչյուր հարցին տրված է չորս ենթադրական պատասխան: Դրանցից միայն մեկն է ճիշտ: Ձեր կողմից ընտրած պատասխանը նշելու միակ ճանապարհը պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում X նշան դնելն է: Ոչ մի այլ նշում, հորիզոնական կամ ուղղահայաց գծեր, շրջագծում և այլն, չի ընկալվի էլեկտրոնային ծրագրի կողմից: Եթե ցանկանում եք ուղղել պատասխանների թերթիկում նշած պատասխանը, ապա ամբողջությամբ ներկեք այն վանդակը ուր դրել եք X նշանը և այնուհետ նշեք պատասխանի նոր տարբերակը (դրեք X նշանը նոր վանդակում): Կրկին անգամ ընտրել այն պատասխանը, որն արդեն ուղղել եք հնարավոր չէ: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

1. Վրացի մատենագիր Սումբատ Դավիթիս-ձեն (Դավթի որդի Սումբաթը) գրում է «Մահացավ Բագրատ Ռեգվենը՝ վրացիների արքան, օրհնված Սումբատ Կյուրոպաղատի որդին, տասներեքերորդ շրջապտույտի 214-րդ քորոնիկոնում և թողեց իր որդուն՝ ուխուցեսի (ավագ) Գուրգենին, ում կոչեցին արքայից արքա»: Ո՞ր թվականին է մահացել վրացիների թագավոր Բագրատ Ռեգվենը:

ա. 884

բ. 934

գ. 994

դ. 1004

2. «Ծովի ժողովուրդների» ո՞ր տարածաշրջան ներխուժելուն հաջորդեց այնտեղ առկա պետության ոչնչացումը:

ա. Հյուսիսային Աֆրիկա

բ. Միջագետք

գ. Փոքր Ասիա

դ. Բալկաններ

3. Ո՞վ էր հույն հայտնի կատակերգակը, որը կծու ծաղրանքի էր ենթարկում ժամանակակիցներին:

ա. Արիստոփանեսը

բ. Էվրիպիդեսը

գ. Էսքիլեսը

դ.Սոփոկլեսը

4. Ո՞րն էր Փառնավազ թագավորի կողմից Արմազի կուռքը կանգնեցնելու գլխավոր նպատակը:

ա. Հաստատել միաստվածություն

բ. Ներմուծել կռապաշտություն

գ. Հիմնադրել լուսատուների պաշտամունքը

դ. Ստեղծել ընդհանուր գերագույն Աստվածության պաշտամունք

5. Ո՞ր պետության զորեղության դարաշրջանն է արտացոլված քարտեզի վրա:

ա. Ալեքսանդր Մակեդոնացու կայսրության

բ. Ֆրանկների թագավորության

գ. Արաբական խալիֆայության

դ. Հռոմեական կայսրության

6. Վերջնականապես ինչո՞վ ավարտվեց Հռոմի հանրապետությունում ընթացող քաղաքացիական պատերազմների երկրատև դարաշրջանը:

ա. Սուլլայի միանձնյա կառավարմամբ

բ. Գնեուս Պոմպեուսի դիկտատուրայով

գ. Սերվիոս Տուլլիոսի թագավորությամբ

դ. Օկտավիանոսի կայսրությամբ

7. Ո՞ր դինաստիայի ներկայացուցիչն էր Ֆրանկների թագավոր Խլոդվիգը:

ա. Վալուայի

բ. Կապետինգների

գ. Կարոլինգների

դ. Մերովինգների

8. Այլ պատճառների հետ մեկտեղ, ի՞նչը պայմանավորեց Բյուզանդական կայսրների կողմից պատկերամարտներին աջակցելը:

ա. Հռոմի Պապի հետ մտերմանալու ցանկությունը

բ. Պետության կայունությունը պահպանելու անհրաժեշտությունը

գ. Եկեղեցու հարուստ գույքին տիրանալու ցանկությունը

դ. Եկեղեցական ժողովի որոշմամբ սահմանված պարտավորությունը

9. Ի՞նչ էր իրենից ներկայացնում Ֆեոդը Միջնադարյան Եվրոպայում:

ա. Հովանավորության դիմաց վասալի կողմից սենյորին տրամադրած հողատարածք

բ. Ճորտ-գյուղացիների կողմից ֆեոդալներին իրենց հողից վճարած բեգարն ու բահրան

գ. Ֆեոդալների կողմից մշակելու և խնամելու նպատակով ճորտ-գյուղացիներին փոխանցված հողը

դ. Աշխատանքի դիմաց սենյորի կողմից վասալին ընծայած հողատարածք

10. Ո՞վ էր «Կարոլինգյան վերածննդի» ժամանակաշրջանի անվանի գիտնականը:

ա. Թովմա Աքվինացին

բ. Վուլֆիլան

գ. Այնհարդը

դ. Պիեռ Աբելարը

11. Աբբասյանների կառավարման օրոք ո՞ր քաղաքում են կառուցել «Իմաստության տունը»:

ա. Բաղդադում

բ. Երուսաղեմում

գ. Ալեքսանդրիայում

դ. Գրանադայում

12. Ի՞նչ էր իրենից ներկայացնում ինվեստիտուրան, որի պատճառով միմյանց էին հակադրվում Հռոմի Պապերն ու Սրբազան Հռոմեական կայսրության կայսրերը:

ա. Հարկերի սահմանման և գանձման առանձնաշնորհը

բ. Դիպտիխում առաջին տեղում հիշատակելու պատիվը

գ. Եպիսկոպոսների միանձնյա նշանակման իրավունքը

դ. Համաշխարհային եկեղեցական ժողով հրավիրելու արտոնությունը

13. Միջնադարում ո՞ր հին հույն փիլիսոփայի աշխատությանն են ծանոթացել եվրոպացիները արաբերեն թարգմանության շնորհիվ:

ա. Ֆլավիոսի

բ. Վերգիլիոսի

գ. Դեմոկրիտեսի

դ. Արիստոտելի

14. Բագրատ III-ը կրում էր Կյուրոպաղատի տիտղոսը, Բագրատ IV-ը՝ ավելի բարձր Սեբաստոսի տիտղոսը, իսկ Գիորգի II-ը՝ Կեսարոսի: Ի՞նչ է մատնացույց անում այս փաստը:

ա. Վրաստանի թագավորության տարածքային ընդլայնում

բ. Բյուզանդիայի համար Վրաստանի կարևորության աճ

գ. Խաչակրաց արշավանքներում վրացիների ակտիվ մասնակցություն

դ. Սելջուկ-թուրքերի դեմ վրացիների հաջողված պայքար

15. Ո՞վ էր Նիզամ ալ-Մուլքը:

ա. Արաբական Խալիֆայության գերագույն աշխարհիկ իշխանավոր

բ. Իլխանական պետության դիվանի ղեկավար

գ. Սելջուկների սուլթանության ամենաականավոր վեզիր

դ. Սասանյան Իրանի պետության քրմապետ

16. Ի՞նչն էր հանդիսացել Հենրի II Պլանտագենետի և Թոմաս Բեքեթի միջև տարաձայնության պատճառը:

ա. Բեքեթի գլխավորությամբ Հռոմի Պապի դեմ սկսած քարոզչությունը

ծ. Հենրիին, որպես Անգլիկանական եկեղեցու առաջնորդ հայտարարելը

գ. Բեքեթի կողմից Ազատության Մեծ Խարտիայի աջակցությունը

զ. Հոգևորականներին իրեն հպատակեցնելու Հենրիի ցանկությունը

17. Ի՞նչը պետք է համարենք Դավիթ IV-ի գործունեության կարևորագույն արդյունքներից մեկը:

ա. Պետական կառավարման նոր համակարգի ձևավորումը

բ. Ֆեոդալական հասարակության համար օրենքների նոր ժողովածու կազմելը

գ. Նախկինում գործող եկեղեցական կառուցվածքի արմատական վերափոխումը

դ. Արևմտյան Եվրոպայի երկրների հետ սերտ կապերի հաստատումը

18. Կապետինգների դինաստիայի կառավարման ավարտից հետո, Անգլիայի թագավորը հավակնություն հայտնեց Ֆրանսիայի գահի նկատմամբ: Ինչի՞ հիման վրա է հայտնել նա այդ հավակնությունը:

ա. Նորմանդիայի դուքսն էր և համարվում էր Ֆրանսիայի առաջին Պերը

բ. Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ Գեղեցիկի թոռն էր

գ. Կրում էր Փարիզի կոմսի տիտղոսը և համարվում էր փոխարքա

դ. Ֆրանսիայի թագավոր՝ անժառանգ Լյուդովիկոս Սուրբի քրոջ որդին էր

19. Ո՞ր պատմական գործընթացն է արտացոլված նկարում ներկայացված քարտեզների վրա:



ա. Ապագաղութացում

բ. Ռիսորջիմենտո

գ. Ռեստավրացիա

դ. Ռեկոնկիստա

20. Ո՞րն էր Վրաստանից ուղարկված անձանց կողմից Ֆերրարա-Ֆլորենցիայի եկեղեցական ժողովը լքելու պատճառներից մեկը:

ա. Ժողովի ընթացքում կայացրած՝ Կոստանդնուպոլիսը ազատագրելու նպատակով հակաօսմանյան կոալիցիա չստեղծելու որոշումը

բ. Ժողովին հնչեցրած գաղափարը՝ Հռոմի Պապի տնօրինության ներքո միավորել արևմտյան և արևելյան եկեղեցիները

գ. Ժողովի կողմից, Երուսաղեմի Ջվարի (Խաչի) վանքը վրաց եկեղեցու տնօրինությանը վերադարձնելու պահանջի անտեսումը

դ. Հռոմի Պապի միանձնյա որոշումը՝ Կաթոլիկ եպիսկոպոսական նստավայրը Թբիլիսիից տեղափոխել Սմիրնա

21. Ո՞րն էր երեսնամյա պատերազմի պատճառներից մեկը:

ա. Բալկաններում քրիստոնյաների և մուսուլմանների միջև կրոնական տարաձայնությունը

բ. Ֆրանսիայի և Անգլիայի շահերի կոնֆլիկտը Ֆլանդրիայում և Նիդերլանդներում

գ. Կենտրոնական Եվրոպայում կաթոլիկների և բողոքականների միջև դավանանքային հակասությունը

դ.Եվրոպայում առաջնության համար Իսպանիայի և Սրբազան Հռոմեական Կայսրության միջև պայքարը

22. Ո՞րն էր 1829 թվականի Ադրիանուպոլսի հաշտության պայմանագրի հետևանքներից մեկը:

ա. Ռուսաստանին փոխանցվեց Սամցխե-Ջավախեթին՝ Ախալցեխեյով և Ախալքալաքիով

բ. Օսմանյան կայսրությունը Ռուսաստանի կազմում ճանաչեց Քարթլին և Կախեթին

գ. Ռուսաստանը գրավեց Աջարիան և տիրացավ Բաթումիին ու Քոբուլեթիին

դ. Օսմանյան կայսրությունը Ռուսաստանին տրամադրեց Լազեթին և Կարսի մարզը

23. Ո՞ր կարծիքն է ճշմարիտ Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության հետ կապված:

ա. Չնայած հռչակված չեզոքությանը, Վրաստանը իրականում միևնույն է համարվում էր Անտանտայի դաշնակիցը և հենց այդ էր պատճառը, որ 1919-1920 թվականներին այստեղ էին գտնվում Բրիտանիայի ռազմական զորամասերը

բ. Խորհրդային Ռուսաստանի հետ կնքած հաշտության պայմանագիրը Գերմանիայում մեծ դժգոհություն առաջացրեց և 1919 թվականին նա Վրաստանից անմիջապես դուրս բերեց իր զինվորական միավորումները

գ. Չնայած գոյություն ունեցող հաշտության պայմանագրի, Օսմանյան կայսրությունը միևնույն է լուրջ տարածքային հավակնություններ էր ներկայացնում Վրաստանի նկատմամբ և դա դարձավ 1920 թվականին Վրաստանը Ազգերի լիգա չընդունելու պատճառներից մեկը

դ. Վրաստանը Եվրոպայի առաջին պետությունն էր, որտեղ իշխանություն եկան սոցիալիստները և դա մեծապես պայմանավորեց 1920 թվականին Երկրորդ Ինտերնացիոնալի անդամների պատվիրակության այցը Վրաստան

24. Ո՞ր պատմական իրադարձությունն է արտացոլված լուսանկարի վրա:



ա. Խորհրդային և Գերմանացի սպաների հանդիպումը Բրեստում Լեհաստանի համատեղ օկուպացիայի ժամանակ

բ. Ավստրիացի և Գերմանացի սպաների հանդիպումը Անշլյուսի ժամանակ ավստրո-գերմանական սահմանի վրա

գ. Ամերիկացի և Խորհրդային սպաների հանդիպումը Գերմանիայի պարտվելուց հետո Էլբա գետի վրա

դ.Անգլիացի և Ամերիկացի սպաների հանդիպումը Հյուսիսային Աֆրիկայում Եգիպտոսը ազատագրելիս

Հրահանգ №25-28 առաջադրանքների համար:
Ժամանակագրական առումով դասավորեք պատմական իրադարձությունները կամ անհատներին: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի վրա հատկացված վանդակներում: Նկատի ունեցեք, որ վանդակում գրվում է միայն անվանած իրադարձության կամ անհատի համապատասխան թվանշանը: Առաջին վանդակում գրվում է այն թվանշանը, որով նշված է բոլորից վաղ տեղի ունեցած իրադարձությունը և այլն, համապատասխանաբար, վերջին՝ երրորդ վանդակում կգրվի այն թվանշանը, որով նշված է բոլորից ուշ տեղի ունեցած իրադարձությունը: Յուրաքանչյուր առաջադրանք գնահատվում է 1 միավոր:

25. Ժամանակագրական առումով դասավորեք հույն պատմիչներին, ըստ նրանց գործունեության ժամանակի:

1. Պոլիբիոս
2. Քսենոփոն
3. Պլուտարքոս

26. Ժամանակագրական առումով դասավորեք խաչակրաց արշավանքների դարաշրջանում տեղի ունեցած իրադարձությունները

1. Երուսաղեմի գրավումը Սալահ ալ Դինի կողմից
2. Անտիոքի դքսության հիմնադրումը
3. Դամիետայի պաշարումը

27. Ժամանակագրական առումով դասավորեք ճարտարապետական հուշարձանները, ըստ դրանց կառուցման ժամանակի.

1. Նոր Շուամթա
2. Իկորթա
3. Բարակոնի

28. Ժամանակագրական առումով դասավորեք գրական ստեղծագործությունները, ըստ դրանցում նկարագրված դարաշրջանների

1. Գրիգոլ Ռոբաքիձեի «Վշտաբեկ հոգին»
2. Միխեիլ Ջավախիշվիլիի «Լամբալոն և Ղաշան»
3. Լևան Գոթուայի «Հերոսների վիշտը»

Հրահանգ #29 առաջադրանքի համար:

Աշակերտին տրվեց քարտեզ: Սեփական գիտելիքի և քարտեզի վրա առկա տեղեկատվության միջոցով նա պետք է պատասխաներ առաջադրված հարցերին: Աշակերտի տրված պատասխաններից երկուսը (2) սխալ են պարունակում: Դուք պետք է գտնեք սխալները, արտագրեք դրանք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում և նույն տեղում ավելացնեք ճիշտ պատասխանները:

Առաջադրանքի առավելագույն միավորն է՝ 2:

Առաջադրանք 29. Քարտեզն ու հարցերը տես հաջորդ էջերում

հարցերը տես հաջորդ էջում

Աշակերտին ուղղված հարցերը	Աշակերտի տրված պատասխանները
29.1.Ի՞նչ անվամբ է հայտնի այն պատմական իրադարձությունը, որի բաղկացուցիչ մասն էին կազմում քարտեզի վրա արտացոլված արշավները:	**29.1** Աշխարհագրական մեծ հայտնագործությունները
29.2. Ո՞ր պետությունից է իրականացել շագանակագույն սլաքով նշված արշավը և ո՞վ էր այդ արշավախմբի ղեկավարը:	**29.2.** Իսպանիայից, Կոլումբոս
29.3. Ո՞ր պետությունից է իրականացել կանաչ գույնի սլաքով նշված արշավը և ո՞վ էր այդ արշավախմբի ղեկավարը:	**29.3.** Պորտուգալիայից, Վասկո դա Գամմա
29.4. Ո՞րն էր շագանակագույն սլաքով նշված արշավախմբի սկզբնական նպատակը:	**29.4.** Գտնել նոր մայրցամաք
29.5. Անվանեք մեկ կոնկրետ պատմական իրադարձություն, որը խթան դարձավ քարտեզի վրա նշված արշավախմբերի համար: Ձեր կարծիքը անպայման հիմնավորեք:	**29.5.** Կրոնական պատերազմները Եվրոպայում, քանի որ պարտված հուգենոտները ստիպված էին լքել Եվրոպան

Հրահանգ № 30 առաջադրանքի համար:
Ուշադիր վերլուծեք նկարում տրված տեղեկատվությունը և պատասխանեք տրված հարցերին: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 7:

Առաջադրանք 30: Նկարներն ու հարցերը տես հաջորդ էջերում

Առաջադրանք 30. Ներկայացված լուսանկարները պատկանում են Յալթայի և Պոտսդամի կոնֆերանսներին

N1

N2

N3

հարցերը տես հաջորդ էջում

Հարցեր.

(2) **30.1.** Ո՞ր նկարի վրա է արտացոլված Յալթայի կոնֆերանսի հանդիպումը: Ձեր կարծիքը հիմնավորեք նկարի վրա առկա տեղեկատվության համաձայն:

(2) **30.2.**Պոտսդամի կոնֆերանսի ժամանակ ընթացող հանդիպումներն արտացոլող երկու լուսանկարից ժամանակագրական առումով ո՞րն է արված ավելի շուտ: Ձեր կարծիքը հիմնավորեք նկարի վրա առկա տեղեկատվության համաձայն:

(2) **30.3.** Ո՞ր պետության կառավարիչն է փոխվել կոնֆերանսների միջև ընկած ժամանակահատվածում և ինչո՞ւ:

(1) **30.4.** Այդ նույն պետությունների կառավարիչների ո՞ր կոնֆերանսի հանդիպումն արտացոլող լուսանկարը *ներկայացված չէ*:

Հրահանգ № 31 առաջադրանքի համար:
Ուշադիր ընթերցեք ստորև ներկայացված պատմական փաստաթուղթը, ըմբռնեք տեքստը և պատասխանեք հարցերին: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Առաջադրանքի առավելագույն միավորն է 19:

Առաջադրանք 31: Պատմական փաստաթուղթն ու հարցերը տես հաջորդ էջերում

Հատված Թեյմուրազ Բագրատիոնիի պատմական երկից

Իսկ հաջորդ գարուն Աղա-Մահմադ Խանը ավարտեց Խորասանի գործերը և պատրաստված մեծ զորքով եկավ Թեհրանից ու հասավ Արդավիլ: Այդ ժամանակ ռուսական զորքերը, Տյար Վալերիան Զուբովն ու մյուսները Դարուբանդի ճանապարհով վերադառնում էին Ռուսաստան, իսկ զորքի մի մասը գնաց Վրաստանի ճանապարհով և մնաց Վրաստանում մինչև աշուն:

Ղարաբաղի Իբրահիմ Խանը տեսնելով ռուսների հեռանալն ու Աղա-Մահմադ Խանի երկրորդ անգամ գալը, չկարողացավ ամուր պահել Շուշիի բերդը, քանի որ բնակիչներից շատ քչերն էին մնացել Ղարաբաղում: Աղա-Մահմադ Խանի պատճառով բոլոր բնակիչները, որոնք փախուստի դիմեցին կամ մնացին, հետագա տարիներին չունեին վար ու ցանք, քանի որ չունեին անասուններ և սովահար էին լինում: Այդ պատճառով նրանց մեծամասնությունը տեղահան եղան և գնացին Քարթլի, Կախեթի և այլ վայրեր: Շատերը մնացին Վրաստանում, Ղարաբաղ չվերադարձան, այլ բնակություն հաստատեցին Վրաստանում: Իսկ Իբրահիմ Խանի բոլոր ազգականներին գերևարեցին պարսիկները: Նա ո՛չ հաց ուներ, ո՛չ որևէ կերակուր, ո՛չ հրացանի վառոդ, ո՛չ փամփուշտ: Այդ պատճառով լքեց իր բերդն ու նրա բնակիչներին և ամբողջ ընտանիքով ու ազգատոհմով գնաց: Բնակիչներից ոմանք հետևեցին նրան, ոմանք այնտեղ մնացին, ոմանք էլ փախան տարբեր վայրեր:

Այդ ժամանակ գնաց փախստական Իբրահիմ Խանը բոլոր իր հետ գտնվողների հետ միասին: Անցավ Քուռն ու Ալազանին, գնաց և ապաստան գտավ Ճարայում

տեքստի շարունակությունը տես հաջորդ էջում

անցնել հարցերին. 1 2 3 4 5 6 7 8 9 10 11

բնակվող լեկերի մոտ ու բնակություն հաստատեց մեծ գյուղում, որը կոչվում էր Բելաքանի: Այդ ժամանակ Աղա-Մահմադ Խանը պարսիկների ամբողջ զորքով մտավ Շուշիի բերդ և կանգ առավ այնտեղ: Շատ զայրացած էր Իբրահիմ Խանի վրա, որ չէր կարողացել ձեռքը գցել: Ուղարկեց իր զորքը Շիրվան և Շաք: Իր մոտ կանչեց և բերել տվեց Շամախիի Խանին: Երբ եկավ, բանտարկեց, քանի որ երբ գալիս էին ռուսական զորքերը Մուստաֆա Խանն էր դիմավորել Զուբովին և Զուբովը նրան մեծ պատվով էր ընդունել: Շատ պատրաստված ցանկանում էր դուրս գալ Վրաստանի դեմ, սակայն հասկանում էր, որ այնտեղ դեռևս գտնվում է ռուսների բազմաթիվ զորքը: Սակայն Իրակլի թագավորը, չնայած նրան, որ իր մոտ էին գտնվում ռուսական զորքերը, միևնույն է նրանց վրա հույս չէր դնում, քանի որ նրանք պատրաստվել էին վերադառնալ Ռուսաստան: Թագավորը ջանադրաբար պատրաստում էր Վրաստանի զորքը և պատրաստ էր պայքարին: Այդ ժամանակ գտնվում էր Տֆիլիսիում և ապրում էր թագուհու պալատում, որտեղ գտնվում էր նաև թագավորի թագաժառանգ որդին:

Այն ժամանակ երբ Աղա-Մահմադ Խանը գտնվում էր Շուշիի բերդում և իր ամբողջ ուժերով արշավանքի էր պատրաստվում, դավադրություն կազմակերպեցին նրա ծառաները՝ ոմն Իսպահանացի Խուդադան իր երկու սպասավորների հետ միասին:

Մի օր, երբ լուսադեմին աղոթելուց հետո քնեց, դավադիր ծառաները հարձակվեցին նրա վրա վրանում, սպանեցին սրով և վերմակով ծածկեցին: Խուդադան գնաց Աղա-Մահմադ Խանի առաջին զորահրամանատար Սադուխ Խանի մոտ և պատմեց կատարվածի մասին:

անցնել հարցերին. 1 2 3 4 5 6 7 8 9 10 11

տեքստի շարունակությունը տես հաջորդ էջում

Այդ ժամանակ շատ այլայլվեց և զարհուրեց Սադուխ Խանը և հարցրեց մարդասպանին, թե ո՞րն էր Աղա-Մահմադ Խանին սպանելու պատճառը: Նա պատասխանեց, որ սպառնացել էր մեզ սպանել և սեփական եսի վտանգված լինելու վախից սպանեցինք: Սադուխ Խանը ասաց, որ ոչ մեկին չպատմեն տեղի ունեցածի մասին և հաջորդ օրը հինգ հազարանոց զորքով լքեց Շուշիի ամրոցն ու գնաց իր Խանություն, մասնավորապես Շաղաղիս: Աղա-Մահմադ Խանի զորքերը տեղեկանալով տեղի ունեցածի և Խանի մահվան մասին, մտան Խանի վրանը և թալանեցին այն: Այնուհետև նրանց միջև խառնաշփոթ սկսվեց, բաժանվեցին նրանք մի քանի մասի և թալանում ու կոտորում էին միմյանց: Շուշիի բերդի բնակիչները տեսնելով այդ ամենը, հավաքվեցին միասին, կանչեցին մոտակա գյուղերում, սարերում, ժայռախորշերում թաքնված տղամարդկանց: Միացան նրանք շուշեցիներին և գերևարում, թալանում ու սպանում էին պարսիկներին: Ղարաբաղցիները գլխատեցին Աղա-Մահմադ Խանի դիակը և գլուխը տարան լեկերի մոտ Բելաքանում ապաստան գտած Իբրահիմ Խանին: Իբրահիմ Խանը տեղեկանալով դրա մասին շատ ուրախացավ: Իսկ Աղա-Մահմադ Խանի մտերիմներից մի քանիսը վերցրեցին իրենց տիրակալի գլխատած դիակը և տարան Պարսկաստան: Բաբա Խանի մայրը՝ Աղա-Մահմադ Խանի եղբոր կինը, որի որդուն որպես իր ժառանգորդ էր հայտարարել Աղա-Մահմադ Խանը, մեծ պատվով տարավ նրա դիակը Բաղդադ, մուսուլմանների աղոթատեղի, որտեղ գտնվում է Ալիի՝ Մուհհամեդի փեսայի գերեզմանը և որտեղ հուղարկավորում են թագավորներին և Պարսկաստանի պալատական մեծամեծներին, և թաղեց այնտեղ:

անցնել հարցերին. 1 2 3 4 5 6 7 8 9 10 11

հարցերը տես հաջորդ էջերում

Հարցեր.

(1) **31.1.** Ըստ աղբյուրի, ուներ արդյո՞ք վրաց թագավորը «ռուսական զորքերի» հույսը: Կարծիքը հիմնավորեք աղբյուրում առկա տեղեկատվության համաձայն:

(1) **31.2.** Ըստ աղբյուրի, ինչո՞ւ կազմակերպեցին Ահա-Մահմադ Խանի ծառաները նրան սպանելու դավադրությունը:

(1) **31.3.** Տեքստում առկա տեղեկատվությունից ելնելով, ինչո՞ւ դիմեցին Աղա-Մահմադ Խանի դահիճները հենց Սադուխ Խանին:

(1) **31.4.** Անվանեք մեկ կոնկրետ պատմական իրադարձություն, որով պայմանավորված էր այդ ժամանակ Թբիլիսիում գտնվող թագավորի թագուհու պալատում գտնվելու հանգամանքը:

Անցնել փաստաթղթի տեքստի 1-ին էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 2-րդ էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 3-րդ էջին

(2) **31.5.** Ի՞նչ էր այն անձի անունը, որը թագավորի հետ միասին գտնվում էր թագուհու պալատում և ինչո՞ւ է աղբյուրի հեղինակը հիշատակում նրան առանձնահատուկ կերպով:

(2) **31.6.** Ի՞նչ կոնկրետ նպատակով էր գտնվում ռուսական զորքը Կովկասում և ըստ աղբյուրի, ո՞վ էր զորքի հրամանատարը:

(2) **31.7.** Ըստ աղբյուրի, անվանեք այն անձին, որին բանտարկեց Շուշիի բերդում գտնվող Աղա-Մահմադ խանը և ո՞րն էր պատճառը:

(2) **31.8.** Ամբողջովին նկարագրեք, թե ինչպե՞ս վարվեցին Աղա-Մահմադ Խանի ռազմիկները, երբ ստացան նրա մահվան մասին լուրը:

Անցնել փաստաթղթի տեքստի 1-ին էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 2-րդ էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 3-րդ էջին

(2) **31.9.** Ըստ աղբյուրի, ո՞ւմ ճանաչեց, որպես իր ժառանգորդ Աղա-Մահմադ Խանը և ի՞նչ բարեկամական կապ ուներ նրա հետ:

(2) **31.10.** Ենթադրենք, անհայտ է աղբյուրում նկարագրված իրադարձությունների տարեթիվը: Նման դեպքում աղբյուրում առկա տեղեկատվության հիման վրա առավելագույն ճշգրտությամբ որոշեք նկարագրված իրադարձությունների վերին ժամանակագրական սահմանը (անվանեք տարեթիվը): Անպայման ներկայացրեք Ձեր կողմից առաջարկած տարեթվի համապատասխան հիմնավորումը:

(3) **31.11.** Ըստ աղբյուրի, թվարկեք երեք պատճառ, որոնցից ելնելով Իբրահիմ Խանը հրաժարվեց Աղա-Մահմադ խանի դեմ պայքարից

Անցնել փաստաթղթի տեքստի 1-ին էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 2-րդ էջին
Անցնել փաստաթղթի տեքստի 3-րդ էջին

Հրահանգ № 32 առաջադրանքի համար:

Ուշադիր ընթերցեք ստորև տրված առաջադրանքը և պատասխանեք հարցերին: Պատասխանները գրառեք պատասխանների թերթիկի համապատասխան տեղում: Բոլոր հարցերին տվեք լիարժեք և սպառիչ պատասխան: Առաջադրանքի առավելագույն միավորն է՝ 4:

Առաջադրանք 32: Բանավեճի թեմայի սահմանում

(1) **32.1.** Ո՞ր կոնկրետ թեման քննարկելիս կկիրառեիք N31 առաջադրանքում ներկայացված պատմական աղբյուրը:

(1) **32.2.** Դասին քննարկելիք թեմայի կարևորագույն հարցը նախատեսելով, ձևակերպեք բանավեճի թեմայի վերնագիրը:

(2) **32.3.** Ձևակերպեք երկու այլընտրանքային դիրքորոշում, որոնք կարող են ծագել բանավեճի ընթացքում: